ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« » հունվարի 2011թ. N_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի ««Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N 3-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման N 3 հավելվածում՝

ա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» գլխի «1. Վարչություններ» կետի 14-րդ ենթակետի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի վարչությունը վերանվանել զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն,

բ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» գլխի «1. Վարչություններ» կետի 21-րդ ենթակետի մշակույթի և տուրիզմի վարչությունը վերանվանել մշակույթի վարչություն,

գ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» գլխի «1. Վարչություններ» կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 22-րդ կետով.

«22) Վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքների կազմակերպման վարչություն»,

դ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» գլխի «3. Բաժիններ» կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-րդ ենթակետով.

«1.1 Առաջին և զորակոչային հարցերի կազմակերպման բաժին»,

ե. ուժը կորցրած ճանաչել «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» գլխի «3. Բաժիններ» կետի 1-ին ենթակետը:

2) Որոշման N 4 հավելվածում՝

ա. Ղեկավարություն» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-րդ կետով.

5.1	քաղաքապետի խորհրդական-գլխավոր դիզայներ	1	230,0		230,0

և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «23» և «4930,0» թվերը համապատասխանաբար փոխարինել «24» և «5160,0» թվերի,

բ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնում «Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի վարչություն» բառերը փոխարինել «Զարգացման և ներդրումային

ծրագրերի վարչություն» բառերով և «Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն» գլուխը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

	Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն				
1	վարչության պետ	1	220,0		220,0
2	վարչության պետի տեղակալ	1	200,0		200,0
	Զարգացման և ներդրումային ենթակառուցվածքային ծրագրերի բաժին				
1	բաժնի պետ	1	175,0		175,0
2	գլխավոր մասնագետ	1	120,0		120,0
3	առաջատար մասնագետ	2	120,0		240,0
4	առաջին կարգի մասնագետ	1	115,0		115,0
	Միջազգային ներդրումային և այլ հաստատությունների նախագծերի համակարգման բաժին				
5	բաժնի պետ	1	175,0		175,0
6	գլխավոր մասնագետ	1	120,0		120,0
7	առաջատար մասնագետ	1	115,0		115,0
	Տուրիզմի զարգացման ծրագրերի բաժին				
8	բաժնի պետ	1	175,0		175,0
9	գլխավոր մասնագետ	1	120,0		120,0
10	առաջատար մասնագետ	1	115,0		115,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	13			1890,0

գ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնում «Մշակույթի և տուրիզմի վարչություն» բառերը փոխարինել «Մշակույթի վարչություն» բառերով և «Մշակույթի վարչություն» գլուխը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

	Մշակույթի վարչություն				
1	վարչության պետ	1	220,0		220,0
2	գլխավոր մասնագետ	1	120,0		120,0
3	առաջատար մասնագետ	1	115,0		115,0
4	գործավար	1	70,0		70,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	4			525,0

դ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքների կազմակերպման վարչություն» գլխով.

	Վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքների կազմակերպման վարչություն				
1	վարչության պետ	1	220,0		220,0
2	գլխավոր մասնագետ	3	140,0		420,0
3	առաջատար մասնագետ	1	120,0		120,0
4	գործավար	1	70,0		70,0

	ԸՆԴԱՄԵՆԸ	6			830,0

ե. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Առողջապահության վարչություն» գլխի 2-րդ կետի 3-րդ սյունակում «2» թիվը փոխարինել «1» թվով, իսկ «Ընդամենը» տողի «8» և «1300,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «7» և «1100,0» թվերի,

զ. ուժը կորցրած ճանաչել «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Արտաքին կապերի վարչություն» գլխի «Արարողակարգի բաժին» ենթագլխի 7-րդ կետը և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «9» և «1345,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «8» և «1225,0» թվերով,

է. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Իրավաբանական վարչություն» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Բնակիչների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության բաժին» ենթագլխով.

	Բնակիչների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության բաժին				
16	բաժնի պետ	1	175,0		175,0
17	գլխավոր մասնագետ	1	120,0		120,0
18	առաջին կարգի մասնագետ	1	105,0		105,0

և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «18» և «2390,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «21» և «2790,0» թվերով,

ը. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Կրթության վարչություն» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-րդ կետով.

1.1	վարչության պետի տեղակալ	1	200,0		200,0

«Հանրակրթության բաժին» 5-րդ կետում «2» և «230,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «1» և «115,0» թվերով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «2280,0» թիվը փոխարինել «2365,0» թվով,

թ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն» գլխի «Հողհատկացման, հողօգտագործման և նախագծային փաստաթղթերի ձևակերպման տարածքային երրորդ բաժին» ենթագլխի 11-րդ կետում «3» և «360,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «2» և «240,0» թվերով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «35» և «4410,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «34» և «4290,0» թվերով,

ժ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն» գլխի 3-րդ կետում «2» և «240,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «1» և «120,0» թվերով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «7» և «995,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «6» և «875,0» թվերով,

ժա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ֆինանսական վարչություն» գլխի բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման բաժինը վերանվանել գործառնական բաժին,

ժբ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնում ուժը կորցրած ճանաչել «Առաջին բաժին» գլուխը,

ժգ. I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Առաջին և զորակոչային հարցերի կազմակերպման բաժին» գլխով.

	Առաջին և զորակոչային հարցերի կազմակերպման բաժին				
1	բաժնի պետ	1	200,0	30,0	200,0
2	առաջին կարգի մասնագետ	1	105,0		105,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	2		30,0	335,0

ժդ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Անձնակազմի կառավարման բաժին» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-րդ կետով.

3.1	գործավար	1	70,0		70,0

ուժը կորցրած ճանաչել «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Անձնակազմի կառավարման բաժին» գլխի 4-րդ կետը և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «655,0» թիվը փոխարինել «620,0» թվով,

ժե. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի ավագանու գործունեությունն ապահովող աշխատանքների կազմակերպական բաժին» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝4-րդ կետով.

4	գործավար	1	70,0		70,0

և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «3» և «435,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «4» և «505,0» թվերով,

ժզ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «362», «88,0» և «50083,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «372», «100,0» և «51565,0» թվերով,

ժէ. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի.

- «1.6 Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Կրթության, մշակույթի և սպորտի բաժին» ենթագլխի 4-րդ կետում «6» և «630,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «5» և «525,0» թվերով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «15» և «1740,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «14» և «1635,0» թվերով,
- «1.6 Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժին» ենթագլխի 4-րդ կետում «4» և «460,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «3» և «345,0» թվերով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «17» և «1990,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «16» և «1875,0» թվերով, իսկ «Ամբողջը» տողի «217» և «23665,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «215» և «23445,0» թվերով,
- ուժը կորցրած ճանաչել «1.7 Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Իրավաբանական բաժին» ենթագլխի 2-րդ կետը և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «5» և «620,0» թվերը փոխարինել

համապատասխանաբար «4» և «500,0» թվերով, իսկ «Ամբողջը» տողի «127» և «14370,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «126» և «14250,0» թվերով,

- «1.8 Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին» ենթագլխի 3-րդ կետում «3» և «345,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «2» և «230,0» թվերով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «10» և «1180,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «9» և «1065,0» թվերով, իսկ «Ամբողջը» տողի «136» և «15235,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «135» և «15120,0» թվերով,
- ուժը կորցրած ճանաչել «1.9 Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Ընդհանուր բաժին» ենթագլխի 3-րդ կետը և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «3» և «410,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «2» և «295,0» թվերով, իսկ «Ամբողջը» տողի «51» և «6190,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «50» և «6075,0» թվերով,
- «Ամբողջը՝ վարչական շրջաններ» տողի «1329» և «150335,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «1324» և «149765,0» թվերով,
- «2 Հասարակական կարգի պահպանության ծառայություն» գլխի «Տարածքային երկրորդ բաժին» ենթագլխի 10-րդ կետում «4» և «420,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «3» և «315,0» թվերով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «40» և «4915,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «39» և «4810,0» թվերով,

ժը. «Ընդամենը՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1584» և «170622,09» թվերը փոխարինել համապատասխանաբար «1578» և «169947,09» թվերով,

ժթ. «Ամբողջը» տողում «1946», «88» և «220705,09» թվերը փոխարինել համապատասխանաբար «1950», «100,0» և «221512,1»թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար-փոխվարչապետի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N 3-Ա որոշմամբ հաստատված հավելվածներում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է Երևանի քաղաքապետարանի աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու և ստորև նշված հանգամանքներով.

Նախագծով նախատեսվում է ստեղծել վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքների կազմակերպման վարչություն, որի նպատակն է Երևանի վարչական շրջանների հետ համագործակցված ամենօրյա աշխատանքների կազմակերպումը:

Նախագծով առաջարկվում է սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի վարչության բազայի հիման վրա ստեղծել զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն, այն է՝ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի վարչությունը վերանվանել զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն, որի կառուցվածքում նախատեսվում է ստեղծել 3 բաժին: Նշվածի նպատակն է խթանել և համակարգել զարգացման ներդրումային ծրագրերը, այդ թվում՝ միջազգային ներդրումների ներգրավմամբ, ինչպես նաև տուրիզմի զարգացման առումով:

Վերոգրյալով պայմանավորված առաջարկվում է մշակույթի և տուրիզմի վարչությունը վերանվանել մշակույթի վարչություն, որի աշխատանքները կազմակերպվելու են զուտ մշակութային հարցերի ոլորտում:

Իրավաբանական վարչության կառուցվածքում առաջարկվում է ստեղծել բնակիչների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության բաժին: Նշվածը պայմանավորված է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով, որի համաձայն՝ Երևանի քաղաքապետը, որպես պարտադիր լիազորություն, իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում բնակիչների իրավունքներն ու ազատություններն ապահովելու համար:

Համայնքային ծառայության գծով նշված փոփոխություններն առաջարկվում է կատարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների որոշ թափուր հաստիքների հաշվին:

Աշխատանքային անհրաժեշտությունով պայմանավորված նախագծով նախատեսվում է նաև Երևանի քաղաքապետարանի հաստիքացուցակում ավելացնել քաղաքապետի խորհրդական-գլխավոր դիզայների և 3 գործավարի հաստիքներ:

Ելնելով վերոգրյալից Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N 3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N 3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում էական փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ